



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. հունիսին /վերլուծություն/

2009թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14320 գործարքներ, որոնց քանակը 2008թ. հունիսի համեմատ նվազել է 0.8%-ով, իսկ 2009թ. մայիսի համեմատ աճել՝ 25.3%-ով:

2009թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4028 օտարման գործարքների 78.1%-ը կազմել են առուվաճառքները, 20.9%-ը՝ նվիրատվությունները և 1.0%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.2%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.4%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2009թ. հունիսին, 2009թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 39.2%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ նվազել՝ 17.9%-ով:

2009թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. հունիսին, 2009թ. մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 36.1%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ նվազել՝ 2.0%-ով:

2009թ. հունիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2008թ.	հունիս 2009թ.	մայիս 2009թ.
Կենտրոն	487000	462800	461300
Արաբկիր	418500	350400	354400
Քանաքեռ-Զեյթուն	309600	271700	274900
Նոր-Նորք	281700	222600	225600
Ավան	274000	225700	221500
Էրեբունի	279500	243300	238900
Շենգավիթ	285000	235500	239000
Դավթաշեն	295000	250900	252600
Աջափնյակ	280800	235600	234900
Մալաթիա-Սեբաստիա	269700	218600	218700
Նուբարաշեն	155300	134700	134700
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>303300</b>	<b>259300</b>	<b>259700</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հունիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. մայիսի համեմատ նվազել են 0.2%-ով:

2009թ. հունիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 326 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. մայիսի համեմատ աճել է 45.5%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ նվազել՝ 22.9%-ով:

2009թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2008թ.	հունիս 2009թ.	մայիս 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	133100	127200	124100
	Ապարան	33700	44000	44000
	Թալին	43500	48000	46500
Արարատ	Արտաշատ	98700	87400	90100
	Մասիս	131600	120800	125000

	Վեդի	79600	85100	85100
	Արարատ	59900	89900	86000
Արմավիր	Վաղարշապատ	166200	166800	172900
	Արմավիր	119100	117500	122000
	Մեծամոր	81300	76000	72500
Գեղարքունիք	Սևան	93700	87200	88200
	Գավառ	47800	46400	47100
	Մարտունի	68600	80000	76700
	Վարդենիս	31700	33200	32200
	Ճամբարակ	16100	19200	18600
Լոռի	Վանաձոր	94000	93000	88800
	Ստեփանավան	46000	53500	52400
	Մայիսակ	62300	73800	73800
	Ալավերդի	31300	33400	33400
	Տաշիր	31500	34800	34800
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	12900	13800	14000
Կոտայք	Աբովյան	175700	143500	141300
	Նոր Հաճն	126600	138400	134900
	Բյուրեղավան	104500	91900	96000
	Եղվարդ	122000	119200	119200
	Հրազդան	70000	61600	63400
	Ծաղկաձոր	150000	182300	182300
	Չարենցավան	94100	87200	83200
Շիրակ	Գյումրի	100100	107200	101600
	Արթիկ	55100	55100	57500
	Մարալիկ	26800	30800	30000
Սյունիք	Գորիս	108700	124600	120100
	Կապան	87300	111100	112600
	Սիսիան	73800	87600	88800
	Մեղրի	46400	54200	54200
	Ազարակ	29100	33100	33100
	Քաջարան	49000	57900	57900
	Դաստակերտ	7000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	75600	71200	71200
	Եղեգնաձոր	97900	109300	106200
	Ջերմուկ	124300	113900	113900
Տավուշ	Դիլիջան	92900	93300	95800
	Իջևան	120300	130500	127800
	Բերդ	39500	43100	43100
	Նոյեմբերյան	30000	34000	34000
	Այրում	21100	24000	24000

2009թ. հունիսին հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. մայիսի համեմատ աճել են 0.4%-ով:

2009թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 422 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 115, մարզերում միասին վերցրած՝ 307: 2009թ. հունիսին, 2009թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 64.8%-ով, ընդ որում Երևանում՝ 2.7 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 44.1%-ով: 2008թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների

քանակը նվազել է 22.1%-ով, ընդ որում Երևանում աճել է 12.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 30.2%-ով:

2009թ. հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2008թ.	հունիս 2009թ.	մայիս 2009թ.
Կենտրոն	494400	493000	501200
Արաբկիր	426900	382000	396400
Քանաքեռ Զեյթուն	316800	298000	308700
Նորք Մարաշ	288900	299500	307700
Ավան	276100	251300	272100
Էրեբունի	281600	273000	281500
Շենգավիթ	287200	261300	271000
Դավթաշեն	301200	281000	297900
Աջափնյակ	289000	269500	274300
Մալաթիա-Սեբաստիա	275900	252000	260300
Նուբարաշեն	159900	152300	155300
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	308900	292100	302400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. հունիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. մայիսի համեմատ նվազել են 3.4%-ով:

2009թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2008թ.	հունիս 2009թ.	մայիս 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	135500	135200	136600
	Ապարան	36700	47900	46900
	Թալին	46700	52500	51900
Արարատ	Արտաշատ	101900	95100	96900
	Մասիս	134500	130500	137300
	Վեդի	90100	93300	93800
Արմավիր	Արարատ	65700	91800	87500
	Վաղարշապատ	172500	178800	178200
Գեղարքունիք	Արմավիր	123500	126600	126400
	Սևան	95800	95600	98800
Գեղարքունիք	Գավառ	49400	54800	56800
	Մարտունի	73600	84100	83000
	Վարդենիս	33800	38000	39200

	Ճամբարակ	20300	22500	22500
Լոռի	Վանաձոր	97000	97400	97800
	Ստեփանավան	51800	58100	58500
	Սպիտակ	66500	77700	77500
	Ալավերդի	33400	35600	36700
	Տաշիր	34700	37600	39400
	Թումանյան	9900	10400	10400
	Շամլուղ	6600	7400	7400
	Ախթալա	15800	18200	18200
Կոտայք	Աբովյան	184400	153400	158900
	Նոր Հաճն	131900	143400	145400
	Բյուրեղավան	106800	102500	109700
	Եղվարդ	124300	127400	130400
	Հրազդան	71800	67700	70900
	Ծաղկաձոր	237800	288200	284000
	Չարենցավան	95900	92000	92200
Շիրակ	Գյումրի	101400	112300	113100
	Արթիկ	58300	60100	64300
	Մարալիկ	31400	34700	37000
Սյունիք	Գորիս	110700	128900	127500
	Կապան	91900	116200	117900
	Սիսիան	74700	93500	96300
	Մեղրի	49600	58600	60400
	Ագարակ	32300	35700	36700
	Դաստակերտ	10400	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	80200	75100	79200
	Եղեգնաձոր	103000	115700	116900
	Ջերմուկ	81500	110400	111800
Տավուշ	Դիլիջան	98800	104300	110300
	Իջևան	125700	136600	143400
	Բերդ	40900	46900	48600
	Նոյեմբերյան	35400	36500	38700
	Այրում	22800	25800	25800

2009թ. հունիսին հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. մայիսի համեմատ նվազել են 1.7 % -ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 1434 միավոր /750.84 հա/ հողեր, որից Երևանում` 73 միավոր /21.99 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, օտարվել են 22 միավոր /8.22 հա/ հողեր, որից Երևանում` 10 միավոր /4.40 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 686 միավոր /641.20 հա/, որից Երևանում` 3 միավոր /0.62 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 540 միավոր /75.09 հա/, որից Երևանում` 46 միավոր /2.96 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 184 միավոր /26.54 հա/, որից Երևանում` 21 միավոր /16.35 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 17 միավոր /7.32 հա/, որից Երևանում` 3 միավոր /2.05 հա/,

- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 5 միավոր /0.47 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 2 միավոր /0.22 հա/ :

2009թ. հունիսին հանրապետությունում օտարված հողերից 1271 միավորի /698.68 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 54 միավոր /19.08 հա/, նվիրատվության գործարքներ՝ 140 միավորի /48.11 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /2.07 հա/ և փոխանակության գործարքներ՝ 23 միավորի /4.05 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.83 հա/:

Հանրապետությունում 2009թ. հունիսին, 2008թ. հունիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 32.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 24.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 37.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 41.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Սյունիքի մարզում՝ 150.35 հա, որից 146.69 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 32.3%-ը կամ 411 գործարքներ /270.16 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 22 գործարքներ /14.56 հա/, իսկ 66.6%-ը կամ 847 միավորը /420.30 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 31 միավոր /4.51 հա/:

2009թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 13 գործարք /8.23 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	2	1.95	12	0.31	8	12.30	2	0.56	1	0.10	20	1.49	8	2.36
Արագածոտն	16	41.10	1	0.90	0	0.00	7	0.30	35	14.18	0	0.00	23	2.62	0	0.00
Արարատ	14	29.78	1	0.01	55	6.06	14	0.12	48	24.84	2	0.38	49	4.04	2	0.04
Արմավիր	4	9.77	1	0.53	0	0.00	8	0.26	68	102.46	0	0.00	59	5.18	1	0.004
Գեղարքունիք	2	2.20	0	0.00	13	1.11	13	0.15	118	59.17	0	0.00	13	1.47	3	0.21
Լոռի	0	0.00	1	0.02	27	3.29	5	0.06	64	27.28	0	0.00	18	3.12	3	0.08
Կոտայք	21	38.72	1	0.50	49	3.99	29	1.02	117	59.25	0	0.00	94	8.37	4	0.16
Շիրակ	0	0.00	1	0.03	12	24.90	11	0.19	29	22.20	0	0.00	9	0.89	2	0.01
Սյունիք	12	77.91	3	1.99	2	0.07	13	0.29	29	68.78	0	0.00	1	0.23	1	0.85
Վայոց Ձոր	8	7.78	0	0.00	0	0.00	11	0.11	3	0.41	0	0.00	1	0.10	1	0.08
Տավուշ	1	0.13	3	0.91	9	0.67	19	0.49	6	4.03	0	0.00	9	1.11	3	4.14
Ընդամենը	78	207.39	14	6.84	179	40.40	138	15.29	519	383.16	3	0.48	296	28.62	28	7.93

Ստորև ներկայացվում է 2009թ. հունիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Ըստ մարզի	20	13.85	2	1.95	12	0.31	6	11.59	2	0.71	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.71
Արմավիր	2	0.003	0	0.00	0	0.00	2	0.003	22	42.30	16	41.10	1	0.90	0	0.00	5	0.30
Գեղարքունիք	2	0.002	0	0.00	0	0.00	2	0.002	81	35.75	13	29.56	1	0.01	55	6.06	12	0.12
Կոտայք	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	11	10.43	3	9.64	1	0.53	0	0.00	7	0.26
Լոռի	1	0.06	0	0.00	1	0.06	0	0.00	27	3.40	2	2.20	0	0.00	12	1.05	13	0.15
Մարզիկ	2	0.09	0	0.00	1	0.08	1	0.01	31	3.29	0	0.00	1	0.02	26	3.22	4	0.05
Սյունիք	5	0.07	0	0.00	1	0.04	4	0.03	93	43.93	19	38.49	1	0.50	48	3.96	25	0.98
Վայոց ձոր	9	24.75	1	0.03	6	24.69	2	0.03	15	0.38	0	0.00	0	0.00	6	0.21	9	0.17
Յևրհայ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	30	80.26	12	77.91	3	1.99	2	0.07	13	0.29
Շիրակ	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	18	7.89	8	7.78	0	0.00	0	0.00	10	0.11
Տավուշ	4	0.142	1	0.11	2	0.03	1	0.002	28	2.05	1	0.13	2	0.80	7	0.63	18	0.49
Ընդամենը	47	38.97	4	2.09	23	25.21	20	11.67	358	230.39	74	206.81	10	4.75	156	15.20	118	3.63

Հանրապետությունում 2009թ. հունիսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /0.59 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. հունիսին, 2008թ. հունիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 44.8%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 80.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 44.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 63.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 12.8%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 53.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 33.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	12	23.66	66.4	2407.5	340.3	27	6.63	365.0	12000.0	4290.5
Ապարան	2	14.93	42.1	80.9	61.5	4	1.92	86.5	2727.3	518.5

Թալին	2	2.51	182.8	184.0	183.4	1	1.48	93.6	5494.5	480.2
Ծաղկահովիտ						2	2.65	79.5	1000.0	232.2
Արարատի մարզ										
Արտաշատ	2	10.94	182.2	265.0	223.6	23	10.39	335.1	10833.3	2046.1
Մասիս	7	17.18	59.7	317.4	152.7	12	6.58	200.0	11904.8	2924.1
Վեդի	4	1.44	810.7	3000.0	1807.6	13	7.88	207.0	10795.1	1815.4
Արմավիրի մարզ										
Արմավիր						34	30.35	294.3	9090.0	1135.5
Բաղրամյան	2	9.00	33.8	57.9	45.8	4	38.78	90.6	2561.1	635.5
Վաղարշապատ	1	0.64	384.7	384.7	384.7	29	32.63	444.4	11764.7	2655.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						110	52.33	199.8	1875.0	444.2
Ճամբարակ						4	4.22	60.5	953.3	230.5
Մարտունի	1	0.20	2444.0	2444.0	2444.0	1	0.28	51.1	2850.0	562.8
Սևան	1	2.00	44.0	44.0	44.0	2	1.33	52.2	2134.8	225.5
Վարդենիս						1	1.00	41.2	2575.1	378.0
Լոռու մարզ										
Այվերդի						39	9.28	170.4	6424.2	1022.6
Գուգարք								234.6	6065.9	1068.8
Սյիտակ								250.0	5555.5	580.5
Ստեփանավան						7	4.38	90.6	1686.6	400.0
Տաշիր						18	13.62	45.3	1384.4	208.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	8	5.44	50.0	328.6	132.3	60	33.59	279.3	11942.7	4878.6
Եղվարդ	11	33.05	74.3	463.9	276.2	42	16.40	174.4	11971.8	3328.5
Հրազդան						15	9.26	130.5	10256.4	1452.6
Շիրակի մարզ										
Ախուրյան						18	13.23	252.0	1693.1	467.9
Ամասիա								40.9	261.0	137.8
Անի						4	3.82	110.6	546.9	280.7
Աշոցք								58.5	215.8	126.3
Արթիկ						7	5.16	79.4	1428.6	225.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1.96	92.6	1023.2	458.3
Կապան	12	77.91	236.2	1025.6	517.9	7	8.26	120.0	841.6	270.8
Մեղրի								193.0	3000.0	575.5
Սիսիան						6	2.61	46.3	1977.4	290.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.15	66.7	66.7	66.7	3	0.41	125.0	10000.0	1475.5
Վայք	7	7.63	115.0	246.0	137.3			58.8	1430.7	504.5
Տավուշի մարզ										
Բերդ						3	0.54	213.3	3783.8	492.6
Իջևան	1	0.13	14300.0	14300.0	14300.0	2	1.99	267.5	9454.5	998.5
Նոյեմբերյան						1	1.50	46.7	7368.4	728.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		



			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						16	15379.0	130.7	22200.0	2570.0
Ապարան						2	2760.0	124.1	609.6	240.0
Թալին						4	5760.0	63.2	1454.8	129.8
Ծաղկահովիտ								60.0	214.3	76.5
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	55	60627.0	144.0	552.3	528.0	18	16326.0	173.9	7140.3	891.2
Մասիս						22	15717.0	187.5	25000.0	1220.0
Վեդի						8	7386.0	126.1	5000.0	660.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						23	19167.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						1	1200.0	100.0	833.3	172.3
Վաղարշապատ						34	30801.0	197.4	26528.4	1537.2
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	6	7320.0	183.3	183.3	183.3	2	2567.0	186.6	1084.3	428.7
Ճամբարակ						2	2644.0	71.3	2286.2	125.4
Մարտունի	3	1516.0	116.9	118.4	117.9	5	5380.0	119.3	5000.0	273.0
Սևան	3	1711.0	466.0	503.4	484.7	4	4080.0	240.0	3110.4	202.2
Վարդենիս								72.5	987.2	142.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						8	14330.0	114.3	1388.9	180.8
Գուգարք						2	2689.0	77.9	14083.3	690.1
Սյլիսակ	26	32187.0	108.3	123.1	115.0	6	10657.0	104.9	1348.3	174.6
Ստեփանավան								88.2	1666.7	132.8
Տաշիր						2	3489.0	45.3	400.0	76.6
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	38	29769.1	271.9	3484.5	2360.1	47	40264.0	264.5	35353.5	2050.4
Եղվարդ						36	33539.0	173.6	27000.0	2655.8
Հրազդան	10	9800.0	126.0	129.3	126.3	11	9940.0	117.7	34848.5	1350.3
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	4	1285.0	1500.0	2315.8	1934.2	5	4570.0	113.6	18750.0	330.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	800.0	465.0	475.0	470.0	2	3512.0	67.9	180.6	115.2
Աջոցք								40.8	144.0	59.1
Արթիկ						2	800.0	111.8	5000.0	216.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	2296.0	112.2	1700.0	278.1
Կապան								67.9	2638.9	222
Մեղրի	2	740.0	350.0	370.0	360.0			68.5	632.9	139
Սիսիան								123.5	875.0	156.5
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						1	960.0	96.7	7659.6	378.1
Վայք								120.7	1448.3	144.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ								75.8	810.0	93.4
Իջևան	7	6323.0	79.2	1495.0	945.1	9	11080.0	74.1	14423.1	479.1
Նոյեմբերյան								125.0	1948.1	162.0

2009թ. հունիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 15 գործարքներ 3.19 հա մակերեսով, ընդ

որում, 13-ը՝ /2.62 հա/ Լոռու և 1-ական՝ /0.11 հա/ Կոտայքի, /0.46 հա/ Շիրակի մարզերում:

2009թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1377 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 90.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. հունիսին 2009թ. մայիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 13.3%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ՝ 32.3%-ով:

2009թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 62 բնակարանների, 36 անհատական բնակելի տների, 483 հասարակական, 79 արտադրական նշանակության օբյեկտների, 698 միավոր /2655.84 հա/ հողերի և 19 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. հունիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 27 վարձակալության գործարքների /այդ թվում 14 միավոր՝ 0.01 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2009թ. մայիսի համեմատ նվազել է 49.1%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ աճել՝ 35.0%-ով: 2009թ. հունիսին հանրապետությունում վարձակալված 2655.84 հա հողերից 2.95 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2652.89 հա հողերի 0.40 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 3.33 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 1287.96 հա, որից 1287.94 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 227.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. հունիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	13	61.60
Արարատ	0	0.00	151	162.18
Արմավիր	0	0.00	11	19.39
Գեղարքունիք	3	22.00	22	302.34
Լոռի	0	0.00	38	22.35
Կոտայք	0	0.00	9	69.07
Շիրակ	0	0.00	136	236.85
Սյունիք	3	205.00	132	234.37
Վայոց Ձոր	0	0.00	17	1287.94
Տավուշ	0	0.00	3	3.57
<b>Ընդամենը</b>	<b>6</b>	<b>227.00</b>	<b>532</b>	<b>2399.66</b>

2009թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1285 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.0%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների

պետական գրանցումների քանակը 2009թ. մայիսի համեմատ աճել է 19.3%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ նվազել՝ 55.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.4%/, առանձնատների /24.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.6%/ և հողերի /13.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 588 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. մայիսի համեմատ աճել է 21.0%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ նվազել՝ 47.6%-ով:

2009թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 281.12 հա հողեր, որից 4.34 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 90.0%-ը կամ 253.13 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 133.31 հա, որից 132.54 հա գյուղատնտեսական նշանակության:

2009թ. հունիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 68 գործարքներ, որից 50-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 86.8%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 8.8%-ն՝ անհատական բնակելի տների, 2.9%-ը արտադրական նշանակության օբյեկտների և 1.5%-ը՝ հողերի նկատմամբ: 2009թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 19.3%-ով, ընդ որում Երևանում աճել է 47.1%-ով, մարզերում նվազել է 21.7%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ նվազել է 80.2%-ով, ընդ որում Երևանում՝ 77.9%-ով, մարզերում՝ 84.6%-ով:

2009թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 1 և 2 գործարքներ /Գեղարքունիքի մարզում/, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.02%: Մասնավորեցման գործարքների քանակը 2009թ. մայիսի համեմատ աճել է 3.0 անգամ, իսկ 2008թ. հունիսի համեմատ նվազել՝ 62.5%-ով:

2009թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2784 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. մայիսի համեմատ աճել է 31.4%-ով, իսկ 2008թ. հունիսի համեմատ՝ 15.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 19.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /34.1%/:

### ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***